Նորություններ

Հետազոտություններ

Միջոցառումներ

Փետրվար

#36

Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն միացավ խտրականության դեմ պայքարի միջազգային օրվան:

New Generation Humanitarian NGO
@NGNGOArmenia
ngngo.armenia
ngngo.armenia
+374(0)60378989
+374(0)60478989

ԴԱՍԸՆԹԱՑ – ՔՀԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2019թ.-ի փետրվարի 14-16-ը տեղի ունեցավ «ՔՀԿ ներկայացուցիչների կարողությունների զարգացում և հզորացում մարդու իրավունքների և ապահով տարածք ստեղծելու ոլորտներում» դասընթացը:

Դասընթացի առաջին օրը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբան Շուշան Խնկոյանը ներկայացրեց «Մարդու իրավունքներ» թեման, որի ընթացքում խոսեց մարդու իրավունքներից, ներպետական և եվրոպական պաշտպանության մեխանիզմներից, ՄԻԵԴ-ից և դիմելու ընթացակարգից:

Հաջորդ օրը սկսեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբան, փաստաբան Անահիտ Մկրտչյանը , որը ներկայացրեց խարանի և խտրականության, ատելության խոսք և խոսքի ազատություն թեմաները:

Երկրորդ օրը իր դասընթացաշարը մեկնարկեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ծրագրերի համակարգող, դասընթացավար Հմայակ Ավետիսյանը: Նա ներկայացրեց «Բռնարարք: Ապահով տարածք խոցելի խմբերի համար», , որոնց ընթացքում մասնակիցները սովորեցին, թե ինչ է բռնությունը և ինչ տեսակների է լինում, ինչպես ձևավորել ապահով տարածք բռնության ենթարկված խմբերի համար:

Դասընթացը հագեցած էր ակտիվ հարցուպատասխանով, ինտերակտիվ վարժանքներով, տեսանյութերի և սահիկաշարի դիտումով:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ՝ ՀԱՆՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՌՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑ

«ԼԳԲՏԻ անձանց իրավունքների խթանում հայաստանյան հասարակությունում» ծրագրի շրջանակներում 2019 թվականի փետրվարի 19-21-ը տեղի ունեցավ «Խտրականության արգելք հանուն ժողովրդավար հասարակության» եռօրյա դասընթացը, որը նախատեսված էր ՀՀ նախարարությունների և մարզային առողջապահության ու սոցիալական ապահովության վարչությունների ներկայացուցիչների համար:

Դասընթացի առաջին օրվա թեման էր «Մարդու իրավունքները», որի շրջանակներում փորձագետ Հասմիկ Հարությունյանը ներկայացրեց մարդու իրավունքներ հասկացությունը, մարդու իրավունքների ծագումն ու սերունդները, մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դերը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ենթաթեմաները:

Դասընթացի երկրորդ օրը փորձագետ Անահիտ Մկրտչյանը ներկայացրեց «Խարանի և խտրականության կանխարգելումը» թեման, որի շրջանակներում քննարկվեցին «Խտրականության արգելքը միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերում», «Խտրականության կատեգորիաները, որոշակի հատկանիշներ», «Խտրականության դեմ իրավունքում ապացուցողական հարցերը», «Խտրականության դրսևորումը բռնության միջոցով» ենթաթեմաները:

Դասընթացի երրորդ օրվա ընթացքում «Խոսքի ազատություն և ատելության խոսք» թեմայի շրջանակներում փորձագետ Արման Ղարիբյանը ներկայացրեց, թե ինչ է խոսքի ազատությունը. Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի մոտեցումը, ինչ է ատելության խոսքը, ինչպե՞ս տարբերել խոսքի ազատության իրացումն ատելության խոսքից, ատելության խոսքի համար գործող պատասխանատվության մեխանիզմները, խոսքի ազատության պաշտպանություն և ատելության խոսքի արգելք: Ներկայացվեցին և քննարկվեցին ՄԻԵԴ դատական գործեր, ատելության խոսքն առցանց տիրույթում

Դասընթացին ներկայացվող բոլոր նյութերն ուղեկցվեցին տեսահոլովակների դիտումներով և ինտերակտիվ վարժանքներով, որոնց միջոցով մասնակիցներն առավել դյուրին ընկալեցին մատուցվող թեման:

Դասընթացի ավարտին մասնակիցներին հանձնվեցին մասնակցության վկայականներ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՀԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

2019թ.-ի փետրվարի 15-ին տեղի ունեցավ քաղաքացիական հասարակության և համայնքահեն կազմակերպությունների ներկայացուցիչներից ձևավորված խորհրդակցական խորհուրդի առաջին աշխատանքային հանդիպումը, որը ձևավորվել է «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում՝ որպես փորձագիտական և խորհրդատվական

ոչ ֆորմալ անկախ մարմին, որի գործունեությունն ուղղված է ՄԻԱՎ-ի կանխարգելման և տրամադրվող ծառայությունների ոլորտում առավել խոցելի խմբերի և համայնքների խնդիրների բարձրաձայնմանը և տվյալ համայնքների ներգրավվածության խթանմանը որոշումների կայացման գործընթացում:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին և հստակեցվեցին խորհրդակցական խորհրդի նպատակը և սկզբունքները: Հաստատված նպատակի և սկզբունքների հիման վրա հստակեցվեց թիրախ համայնքը՝ SUS-ներն ու տրանս կանայք: Մանրամասն քննարկվեցին խորհրդակցական խորհրդի կանոնադրության դրույթներն ու կետերը:

Հանդիպումն անցավ բուռն քննարկումների և խորհուրդի արդյունավետ գործունեությանը միտված բազմաթիվ առաջարկների խանդավառ մթնոլորտում՝ մինչև հաջորդ հանդիպումը կանոնադրության փաստաթղթի միասնական մշակման աշխատանք կատարելու նպատակադրվածությամբ և հաջորդ ամսվա ընթացքում հանդիպելու և հետագա անելիքները քննարկելու ակնկալիքով:

Օրենսդրական առաջարկությունների ներկայացում

«ԼԳԲՏԻ անձանց մարդու իրավունքների խթանում հայաստանյան հասարակությունում» ծրագրի շրջանակներում 2019թ.-ի մարտի 6-ին կազմակերպված «ԼԳԲՏԻ հիմնակահարցերն այլ տեսանկյունից» կոնֆերանսի ժամանակ «Նոր Սերունդ» մարդասիրական ՀԿ-ի իրավաբան/փաստաբան Անահիտ Մկրտչյանը ներկայացրեց ՀՀ-ում նույնասեռական տղամարդկանց արյան դոնոր հանդիսանալու մշտական հակացուցման հետ կապված օրենսդրական կարգավորումները՝ կից նշած հակացուցումը ԱՆ համապատասխան հրամանից հանելու վերաբերյալ նախագծով և հիմնավորումներով:

Կոնֆերանսի մասնակիցներին ներկայացվեց նաև «Նոր Սերունդ» մարդասիրական ՀԿ-ի ողմից մշակված «Գենդերային վերափոխության իրավական ճանաչման մասին» ՀՀ օրենքի նախագիծը և օրենքի անհրաժեշտության հիմնավորումը:

Կոնֆերանսին ներկա էին ներկայացուցիչներ տեղական և միջազգային կազմակերպություններից, Ազգային ժողովից, ոստիկանությունից, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից, քաղաքացիական հասարակությունից, ովքեր ցուցաբերեցին հետաքրքրվածություն և հանդես եկան ներկայացված օրենսդրական նախագծերի առաջխաղացման առաջարկներով:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի և Էլթոն Ջոնի՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի շրջանակներում, 2019թ.-ի **հունվար-փետրվար** ամիսների ընթացքում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հոետազոտություն է իրականացվել Հայաստանի ՏՍՏ, ԼԳԲՏ, ԿՍԱ և ԹՆՕ համայնքների ներակայացուցիչների շրջանում:

1116

Հետազոտված շահառուներ:

41

ՄԻԱՎ դրական նոր դեպք:

14

Վերցվել է դիսպանսերային հսկողության՝ բուժման, խնամքի և աջակցության հետագա տրամադրմամբ:



Այցելության օրերը և ժամերը
երկուշաբթիից հինգշաբթի
10:00-22:00
Թումանյան 41 բն. 4
+374 (0)60378989
+374 (0)60478989

ՍԵՌԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՎ-Ի ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

- ԳԱՂՏՆԻ, ԱՆԱՆՈՒՆ ԵՎ ԱՆՎՃԱՐ
- ԱՌԱՆՑ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ
- ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ 20 ՐՈՊԵԻՑ

ՏԵՍԱՆՅՈՒԹ
ՄԻԱՎ-ի թեստավորման ուղեցույց

ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Իրավաբանական խորհրդատվություններ և փաստաբանական ծառայություններ.
ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ 2019

82 Իրավաբանական խորհրդատվություն

Քրեական գործերով **7** անձանց ներկայացուցչություն՝ մինչդատական և դատական փուլերում

ՀՀ վարչական դատարան է ներկայացվել մեկ հայցադիմում

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել երկու հայցադիմում՝

- «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից 2019թ.-ի հունվար-փետրվար ամիսներին տրամադրվել է 82 իրավաբանական խորհրդատվություն:
- «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի փաստաբանները վերոնշյալ ժամանակահատվածում իրականացրել են քրեական գործերով 7 անձանց ներկայացուցչություն՝ մինչդատական և դատական փուլերում :
- «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից նշված ժամանակահատվածում ՀՀ վարչական դատարան է ներկայացվել մեկ հայցադիմում՝ տեղեկատվության տրամադրման պարտավորեցման պահանջի մասին՝ ընդդեմ ՀՀ Ոստիկանության:
- «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից նշված ժամանակահատվածում ՀՀ վարչական դատարան է ներկայացվել մեկ հայցադիմում՝ տեղեկատվության տրամադրման պարտավորեցման պահանջի մասին՝ ընդդեմ ՀՀ Ոստիկանության:
- «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից նշված ժամանակահատվածում ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել երկու հայցադիմում՝ զրպարտություն համարվող փաստացի տվյալները հերքելու և վնասի փոխհատուցման պահանջների մասին՝ ընդդեմ Հրապարակ օրաթերթի, Գևորգ Պետրոսյանի ու Արագած Ախոյանի:

Անվճար իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար զանգահարել +37460478989 հեռախոսահամարին, կամ այցելել ՆՍՀԿ գրասենյակ, Թումանյան 41, բն.4